ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 118 –Ա
16 հուլիսի 2013թ.

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Լ.ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ >>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման N1 հավելվածի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2006 թվականի փետրվարի 1-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության մարզական և մշակութային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման ընթացակարգը հաստատելու մասին>> N15-Ն որոշման պահանջները

որոշում եմ՝

1. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարել բաց մրցույթ:
2. Հաստատել <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար բաց մրցույթ անցկացնելու վերաբերյալ հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանին՝
   1). <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար բաց մրցույթ անցկացնելու վերաբերյալ հայտարարությունը հրապարակել <<Գեղամա աշխարհ>> թերթում 2013 թվականի հուլիսի 25-ին և <<Գեղամա>> հեռուստաընկերությամբ՝ 2013 թվականի հուլիսի 31-ին, ինչպես նաև տեղադրել մարզպետարանի կայք էջում.

2) մրցույթին մասնակցելու մասին հայտերի ընդունումն իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի միջոցով մինչև 2013 թվականի սեպտեմբերի 3-ը.

3) մրցույթն անցկացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի շենքում, այդ նպատակի համար առանձնացված սենյակում 2013 թվականի սեպտեմբերի 12-ին ժամը 11:00-ին:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:

5 .Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ